Աննա Բաբուշյան

Սասնո Դավիթ ժամն է եկել, Մելիքները ծնկի պիտ գան

Ձենով Օհան ձայն տուր խորքից

Էնպես գոռա, որ քո ձայնից ,

Տեղից թռնի սիրտն աշխարհի

Տեղն իմանա մեռած խղճի:

Սասնո Դավթին, ձայն տու'ր, թո'ղ գա

Մեր փրկության դուռը բանա,

Թո'ղ մին զարկի թուր կեծակին

Գետնին զարնի մելիքներին:

Ձենով Օհան ձայնդ հասցրու Ազռավաքար

Ասա դուրս գա Մհերն արդար,

Ասա գարին քանց մասուր է դարձել վաղուց

Ցորենն ընկույզ, ոգին հայի անպարտ առյուծ:

Բացի'ր գոց դուռը փակված հույսի

Հանուն քո ծուռ սերունդների ,

Շեփորականչ թո'ղ դղրդա հաղթանակի

Հանուն խղճի ու արդարի վերադարձի:

1.02.2025

ԱԽՈՒՐՅԱՆ